

**ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ
ԱՆՎ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**



**РЕСПУБЛИКА
АРМЕНИЯ**

**ЕРЕВАНСКИЙ УНИВЕРСИТЕТ
ИМ. МОИСЕСА ХОРЕНАЦИ**

10.12.2010 թ.

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 3

**ԵՐԵՎԱՆԻ ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅՈՒ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ № 3 ՆԻՍՏԻ**

Նիստին ներկա էին խորհրդի բոլոր անդամները, բացառությամբ ուսանողներ Հերմինե Խաչատրյանի և Սոնա Սուրենյանի.

1. Ղազարյան Հայկ
2. Աղաբաբյան Արթուր
3. Դավթյան Կարինե
4. Հակոբյան Յուրա
5. Միկիլյան Մարինե
6. Քթրյան Գագիկ
7. Նիկողոսյան Արամ
8. Գալստյան Բակուր
9. Կարազուլյան Հասմիկ
10. Հովհաննիսյան Կիմա

Օրակարգում դրված էր՝

1. Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտորի տարեկան հաշվետվությունը,
2. Համալսարանի 2011-2015 թթ զարգացման ռազմավարական ծրագիրը,
3. Խորհրդի անդամների թափուր տեղերի համալրման հարցը:

Ելույթ ունեցան՝

1. Ռեկտոր Ա. Աղաբաբյանը ներկայացրեց Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի 2010 թ-ի տարեկան հաշվետվությունը:

2. Ա. Աղաբաբյանը ներկայացրեց համալսարանի 2011-2015 թթ զարգացման ռազմավարական ծրագիրը:
3. Գ. Քթրյանը ներկայացրեց, որ խորհրդի անդամ ուսանողների ավարտելու կապակցությամբ առաջացել են երկու թափուր տեղեր, որոնք համաձայն Երևանի Մովսես Խորենացու անվան համալսարանի կառավարման խորհրդի ձևավորման կարգի ուս. խորհրդի ներկայացմամբ համալրվելու են նոր ուսանողներով (ներկայացվել են Չյունիկ Ավեյանի և Աննա Ֆրդոյանի թեկնածությունները):

Որոշեցին՝

1. հաստատել ռեկտորի տարեկան հաշվետվությունը,
2. հաստատել բուհի 2011-2015 թթ զարգացման ռազմավարական ծրագիրը,
3. կառավարման խորհրդի կազմում ընդգրկել ուսանողներ Չյունիկ Ավեյանին և Լիլիթ Բադալյանին:

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

Հ. Ղազարյան

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՂԱՐ՝

Հ. Կարազուլյան